

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԻՈԵԹԻԿԱՅԻ ԱՊՐՈԲԱՑԻԱՅԻ (ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ) ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դավթյան Ս.Հ.

Երևանի պետ. բժշկական համալսարանի փիլիսոփայության ամբիոն, Երևան, Հայաստան  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի հայկական բաժանմունք

ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2005թ. հոկտեմբերին ընդունեց «Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» հռչակագիր: Բիոէթիկայի պատմության մեջ առաջին անգամ ՄԱԿ-ի անդամ պետությունները և միջազգային հանրությունը պարտավորվեցին մեկ միասնական համատեքստում հարգել և իրազործել փաստաթղթում հռչակած Բիոէթիկայի հիմնական սկզբունքները: Հռչակագիրը վերաբերում է բժշկության, կյանքի մասին գիտությունների և դրանց առնչվող տեխնոլոգիաների բարոյագիտական հարցերին, առաջնորդվելով այն սկզբունքներով, որոնք ապահովում են մարդու արժանապատվության և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հռչակագիրը դրանով իսկ հաստատում է մարդու իրավունքների և էթիկական նորմերի փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

2008 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտության և տեխնոլոգիաների էթիկայի բաժանմունքը (վարիչ<sup>a</sup> Յենկ Տեն Հավե) մշակեց և ներկայացրեց Բիոէթիկայի ուսումնական ծրագիր:

2010թ. նոյեմբերի 23-ին Համաձայնագիր (Մեմորանդում) կնքվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Դ. Բադարջ) և ԵՐՊԲՀ-ի (Ս. Դավթյան) միջև:

Մինչ ԵՐՊԲՀ-ի հետ համաձայնագիր կնքելը ՅՈՒՆԵՍԿՕ-ն համաձայնագիր էր կնքել Մոսկվայի, Կազանի և Մինսկի համալսարանների հետ, ելնելով այն հանգամանքից, որ այստեղ աշխատում են միջազգային ճանաչում ունեցող, դասագրքեր հրատարակած փորձագետներ, որոնք պետք է իրականացնեն հիշյալ ծրագրի փորձարկումը: Այսպիսով, հետխորհրդային տարածքում չորրորդ համաձայնագիրը կնքվեց Հայաստանի ԵՐՊԲՀ-ի հետ:

Լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի միջազգային ցանցի հայկական բաժանմունքի վարիչ և կնքելով համաձայնագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, պարտավորված եմ ներկայացնելու սույն հոդվածը, որում ամփոփված են Հռչակագրի սկզբունքներին, դրանց ուսումնասիրման նպատակներին, մեթոդներին, ուսումնական ծրագրի անառարկելի առավելություններին, թերություններին ու այն կատարելագործելու համար հնարավոր առաջարկներին վերաբերող դատողություններ:

Սույն հոդվածը հռչակագրի նպատակների իրագործման միջոցներից մեկն է, որն առաջարկում է մարդկանց օգտվել գիտության ու տեխնիկայի նվաճումներից միայն այն դեպքում, երբ հարգվում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները: